ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 181

25 նոյեմբերի 2013 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 36/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՌԱԴՆԻԿ ԵՓՐԵՄԻ ՇԱՎՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի N 11 տան բնակիչ Ռադնիկ Շավոյանի դիմումը Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի 1-ին նրբանցք 36/2 հասցեում կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող 0.00262 հա հողամասն և ավտոտնակը, որը չի ընդգրկում 60-րդ հոդվածի դրույթները և նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրիման>> կարգի 34 և 35-ի դ) ենթակետի և հաշվի առնելով, որ կցակառույցը պահպանելը չի խանգարում այլ անձանց իրավունքները, կցակառույցը կառուցված չէ ինժեներատեխնիկական օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի 1-ին նրբանցք 36/2 հասցեում կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող 0.00262 հա հողամասն և ավտոտնակը ուղղակի վաճառքով օտարել Ռադնիկ Շավոյանին:
2. Կատարել վճարում.

   26.20 քմ մակերեսով ավտոտնակի համար 22532 հազ. դրամ, շինության զբաղեցրած 0.00262 հա մակերեսով հողամասի համար 13833.6 հազ. դրամ:
3. Գույքային իրավունքների պետական գրանցումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ